հատակեաց զԱիւբեղ և զմայր նորա. և ասեն թէ՝ զոսկերսն Եղիսէի Մարգարէին եդիտ և այրեաց հրով, և անցեալ գնաց ի Պարսս պատերազմել ընդ Շապհոյ. և յայտնապէս ՝ի նոյն տեղին սպանաւ ՝ի Մերկերիոսէ՝ հրամանաւ սուրբ Աստուածածնին։

Յորիանոս՝ որ է Հովիան, սկսաւ յամի Տեառն ՅԾԱ. ինքնակալեալ ամս ԺԱ. և ամանք Ա. ամ՝ ասեն՝ թագաւորեալ ըստ պատմագրացն Հայոց՝ և ուղղափառութեամբ վախճանեալ։ Սա քրիստոնեայ գոլով նախ՝ մինչ զօրապետ էր զօրացն Յուլիանոսի, հարկեցաւ ՝ի նմանէ՝ կամ ուրանալ զՔրիստոս, և կամ զսկիզ ՝ի պատուոյն. իսկ նա զպատիւն արհամարհեաց և զՔրիստոս ոչ ուրացաւ։ Դէ յետ սատակման Յուլիանոսի՝ զօրքն թագաւորեցուցին զՅորիանոս ընդ եղբօր իւրում Վալենտիանոսի։ Դէ իբրև եկն ՝ի Պարսից ՝ի Կոստանդնուպօլիս և նստաւ յաթոռ թագա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան